Կարգապահական գործ թիվ 17081

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի փետրվարի 20-ի թիվ 28-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/20-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Կարապետ Աղաջանյանի, Տիգրան Խուրշուդյանյի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր՝ 425) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

27.07.2017թ. Պալատում մուտքագրվել է Էմմա Թումասյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որի համաձայն՝ Դիմողը, հօգուտ իրեն փոխառության գումարի բռնագանձման գործով իր շահերը ներկայացնելու համար, դիմել է փաստաբան Վահագն Դանիելյանին: Վահագն Դանիելյանը խոստացել է Դիմողին, որ գործը Դիմողի համար հաջող ելք կունենա: Դիմողը և իր ամուսինը Վահագն Դանիելյանին վճարել են 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ չափով հոնորար:

Ըստ Դիմողի՝ Վահագն Դանիելյանն իր գործը խոստացել է սկսել 2013թ. հունվար ամսից, սակայն վերջինիս անգործության պատճառով գործը դատարան է մուտք արվել 2016թ.: Դիմողը նշել է, որ ըստ Պատասխանողի առաջին ատյանի դատարանում հայցը մերժվել է: Ըստ Դիմողի, ինքն ու ամուսինը բազմիցս դիմել են Վահագն Դանիելյանին՝ հետաքրքրվելով գործի ընթացքով և ամեն անգամ ստացել են տարբեր, ըստ Դիմողի, սուտ պատճառաբանություններ: Դիմողը նշում է, որ Վահագն Դանիելյանի տեղեկացմամբ, նա առաջին ատյանի վճիռը բողոքարկել է վերաքննիչ դատարան: Մի քանի օրից Վահագն Դանիելյանը զանգահարել է Դիմողին և ասել, որ վերաքննիչ դատարանը բավարարել է իր բերած բողոքը և առաջին ատյանի վճիռը բեկանել, այսինքն՝ գործը լուծվել է հօգուտ Դիմողի: Այս խոսակցությունից հետո, ըստ Դիմողի, Վահագն Դանիելյանը որևէ կերպ կապի դուրս չի եկել, և հնարավոր չի եղել նրա հետ կապ հաստատել կամ տեսնել նրան:

Դիմողը խնդրել է Պալատին միջոցներ ձեռնարկել հանդիպելու փաստաբանին:

Կից ներկայացվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.07.2016թ. վճիռը՝ Դիմողի հայցը մերժելու վերաբերյալ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի պաշտոնակատարի 28.08.2017թ. թիվ 254-Ա/ԿԳ-17081 որոշման հիման վրա փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր՝ 425) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

01.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ փաստաբան Ստեփան Ոսկանյանին **(այսուհետ նաև՝ Նախապատրաստող)**:

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Դիմողը կարգապահական գործի նախապատրաստման փուլում Դիմողը բանավոր բացատրությամբ հայտնել է, որ 500.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջով դատարան դիմելու նպատակով 2014թ. դեկտեմբեր ամսին պայմանագիր է կնքել Պատասխանողի հետ, կատարել է վճարում 100.000 ՀՀ դրամի չափով, սակայն վերջինս ավելի քան երկու տարի անց է հայցը ներկայացրել դատարան: Իր բազմաթիվ հեռախոսազանգերին փաստաբանը չի պատասխանել, իսկ երբ հնարավոր է եղել կապ հաստատել նրա հետ՝ վերջինս ամեն անգամ ստել է և բերել է անհիմն պատճառաբանություններ: Ընդհանուր իրավասության դատարանի՝ 06.07.2016թ. վճռով հայցը մերժվել է, որից հետո փաստաբանը հայտնել է, որ դատարանի վճիռը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ դատարան և այն բեկանվել է հօգուտ Դիմողի, սակայն հետագայում պարզվել է, որ վճիռը վերանքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Դիմողը հայտնել է նաև, որ դրանից հետո փաստաբանը չի պատասխանել իր հեռախոսազանգերին, նույնիսկ մի քանի անգամ գնացել է փաստաբանի գրասենյակ, սակայն վերջինս այնտեղ չի եղել:

Պալատի խորհրդի նիստում Դիմողը հայտնել է, որ ինքը և իր ամուսինը թոշակառու են, ինքը երկրորդ կարգի հաշմանդամ է, անկողնային հիվանդ, և Պատասխանողը նրանցից վերցրել է իրենց ապրուստի միջոցները, սակայն խարդախաբար որևէ գործողություն չի կատարել իրենց գումարը պարտապանից ստանալու ուղղությամբ:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման փուլում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով որպես վկա ներգրավվել է Դիմողի ամուսինը՝ Նիկոլայ Հակոբյանը (**այսուհետ նաև՝ Վկա**): Վերջինս 20.02.2018թ. Պալատի խորհրդի նիստում տված ցուցմունքում նշել է, որ 2013թ. Վկայի և Գետամեջ գյուղի բնակիչ Ռաֆիկ Գրիգորյանի միջև կնքվել է փոխառության գրավոր պայմանագիր, որի համաձայն՝ Ռաֆիկ Գրիգորյանը պարտավորվել է մինչև 2013թ. օգոստոս ամիսը Վկային վերադարձնել 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Նշված ժամկետում գումարը չվերադարձնելու դեպքում գումարի նկատմամբ հաշվարկվելու էր դրա քսան տոկոսի չափով տուժանք: 2013թ. մայիսին Ռաֆիկ Գրիգորյանը մահացել է: Վկան հանդիպել է հանգուցյալ պարտապանի ընտանիքի անդամների հետ փոխառության գումարի վերադարձի հարցով, և վերջիններս մերժել են գումարը վերադարձնել Վկային:

Դրանից հետո Վկան և Դիմողը դիմել են Պատասխանողին, որպեսզի վերջինս ներկայացնի իրենց շահերը: Պատասխանողը խոստացել է, որ գործը կունենա բարեհաջող ելք: Կնքվել է պայմանագիր, որը սկզբում գրավոր չի ձևակերպվել: 2014թ. Վկան դիմել է Պատասխանողին գրավոր պայմանագիր կնքելու հարցով, որից հետո պայմանագիրը ձևակերպվել է գրավոր: Վկան և Դիմողը Պատասխանողին վճարել են 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2013թ. սկսած՝ Պատասխանողը գործի ընթացքի վերաբերյալ որևէ ստույգ տեղեկություն Վկային և Դիմողին չի հայտնել: Երբ Վկան հետաքրքրվել է Պատասխանողից, թե ինչ ընթացքում է գտնվում իրենց գործը և ինչու է ձգձգվում, Պատասխանողը պատասխանել է, որ հարկավոր է, որպեսզի Ռաֆիկ Գրիգորյանի մահից հետո անցնի վեց ամիս, որպեսզի հնարավոր լինի նրա ժառանգությունն ընդունած ժառանգներին ներկայացնել գումարի բռնագանձման պահանջ: Մեկ ուրիշ անգամ Պատասխանողը Վկային հայտնել է, թե դիմել է դատարան՝ պարզելու համար հանգուցյալ պարտապանի ժառանգներին, որպեսզի հնարավոր լինի նրանց ներկայացնել գումարի բռնագանձնման պահանջ: 2016թ. դեկտեմբերին Դիմողը խնդրել է Պատասխանողից, որպեսզի ինքը գրի, թե երբ է տեղի ունենալու իրենց գործով դատական նիստը: Պատասխանողը Վկային գրավոր գրել է, որ իրենց գործով դատական նիստը տեղի է ունենալու 01.12.2016թ.:Նմանատիպ գրություն Պատասխանողը Վկային տվել է նաև առաջին ատյանի դատարանի վճռի հրապարակման ժամկետի վերաբերյալ՝ 05.07.2016թ.:

Չնայած Վկայի պահանջներին՝ ծառայության մատուցման ընթացքում Պատասխանողն իր նախաձեռնությամբ Դիմողի կամ Վկայի հետ չի կապվել, գործի ընթացքի մասին չի տեղեկացրել:

01.12.2016թ. դատական նիստից հետո Վկան հանդիպել է Պատասխանողի հետ և տեղեկացել, որ առաջին ատյանի դատարանը հայցը մերժել է: Պատասխանողը Վկային հավաստիացրել է, որ առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկելու է վերաքննիչ դատարան: 2016թ. հուլիսին Վկան կապվել է Պատասխանողի հետ, և վերջինս Վկային տեղեկացրել է՝ իբր իրենք դատը հաղթել են, և գործը գտնվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում: Վկան և Դիմողը դիմել են Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Եղվարդի բաժանմունք և պարզել, որ նման գործ ծառայության վարույթում առկա չէ: Վկան հայտնել է Պատասխանողին, որ իրենք ճշտել են, որ Դատական ակտերի հարկադիր ծառայության Եղվարդի բաժանմունքում իրենց

գործը մուտք չի արվել, ինչին Պատասխանողը պատասխանել է, թե կատարողական թերթը տարել է ծառայության Աբովյանի բաժանմունք, որտեղ ինքը ծանոթ ունի: Դրանից հետո Պատասխանողի հետ կապվել չի հաջողվել:

4. **<u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 31.10.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն հաստատված է համարել հետևյալ փաստերը.

- Իր շահերի պաշտպանությունն իրականացնելու, իրեն իրավաբանական օգնություն ցույց տալու և պարտքով տված 500.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման գործով դատարան դիմելու նպատակով քաղաքացի Էմմա Թումասյանը դիմել է փաստաբան Վահագն Դանիելյանին, ում հետ 20.12.2014թ-ին կնքել է փաստաբանական գործունեության պայմանագիր, որն ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից:
- Նշված պայմանագրի համաձայն՝ փաստաբան Վահագն Դանիելյանը պարտավորվել է ի օգուտ Դիմողի իրականացնել փաստաբանական գործունեություն, այն է՝ ՀՀ բոլոր ընդհանուր իրավասության դատարաններում հանդես գալ որպես հայցվորի կամ պատասխանողի ներկայացուցիչ և ներկայացնել պատվիրատուի շահերը ըստ վերջինիս հայցի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:
- Համաձայն պայմանագրի՝ մատուցվող ծառայությունների դիմաց Էմմա Թումասյանը պարտավորվել է փաստաբան Վահագն Դանիելյանին որպես վարձավճար վճարել 100.000 ՀՀ դրամ, որը և փաստացի վճարել է վերջինիս:
- Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնելուց հետո փաստաբան Վահագն Դանիելյանը, որպես Դիմողի ներկայացուցիչ, 23.03.2016թ-ին ընդդեմ Աստղիկ, Հունան, Դավիթ, Ռուզաննա Պետրոսյանների, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և գումարի բռնագանձման պահանջների մասին հայցադիմում է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որն ընդունվել է վարույթ 25.03.2016թ-ին:
- Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԿԴ3/0275/02/16 քաղ. գործով 06.07.2016թ-ին կայացված վճռով հայցը մերժվել է, միաժամանակ, վճռվել է Էմմա Թումասյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 14.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի չվճարված գումար:
- Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 06.07.2016թ-ի վճիռը չի բողոքարկվել և 09.08.2016թ-ին մտել է օրինական ուժի մեջ:
- Պատասխանողն իր վստահորդին կանոնավորապես, ժամանակին և ջանասիրաբար չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին, խուսափել է պատասխանել վերջինիս հեռախոսազանգերին և նրան հետաքրքրող հարցերին, չի բողոքարկել դատարանի վճիռը՝ թույլ տալով Կանոնագրքի վերը նշված ենթակետերի պահանջների խախտումներ:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 01.11.2017 թ.,

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 20.02.2018 թ. ժամը 18:30-ին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.**

1. Իր շահերի պաշտպանությունն իրականացնելու, իրեն իրավաբանական օգնություն ցույց տալու և պարտքով տված 500.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման գործով դատարան դիմելու նպատակով քաղաքացի Էմմա Թումասյանը դիմել է փաստաբան Վահագն Դանիելյանին, ում հետ 20.12.2014թ-ին կնքել է փաստաբանական գործունեություն իրականացնելու N 36-14 պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից:

Նշված փաստը հաստատվում է Էմմա Թումասյանի դիմումով և բացատրությամբ, վկա Նիկոլայ Հակոբյանի ցուցմունքով, Էմմա Թումասյանի և Վահագն Դանիելյանի միջև կնքված պայմանագրով:

2. Էմմա Թումասյանը պարտավորվել է փաստաբան Վահագն Դանիելյանին որպես հոնորար վճարել 100.000 ՀՀ դրամ, որը և փաստացի վճարել է վերջինիս:

Նշված փաստը հաստատվում է Էմմա Թումասյանի դիմումով, Էմմա Թումասյանի և Վահագն Դանիելյանի միջև կնքված պայմանագրով, վկա Նիկոլայ Հակոբյանի ցուցմունքով:

3. Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնելուց հետո փաստաբան Վահագն Դանիելյանը, որպես Դիմողի ներկայացուցիչ, 23.03.2016թ-ին ընդդեմ Աստղիկ, Հունան, Դավիթ, Ռուզաննա Պետրոսյանների, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և գումարի բռնագանձման պահանջների մասին հայցադիմում է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որն ընդունվել է վարույթ 25.03.2016թ-ին:

Նշված փաստը հաստատվում է թիվ ԿԴ3/0275/02/16 քաղաքացիական գործով www.datalex.am դատական տեղեկատվական համակարգից տպված քաղվածքով, դատարանի վճռով, Դիմողի բացատրությամբ, վկա Նիկոլայ Հակոբյանի ցուցմունքով:

4. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԿԴ3/0275/02/16 քաղ. գործով 06.07.2016թ-ին կայացված վճռով հայցը մերժվել է, միաժամանակ, վճռվել է

Էմմա Թումասյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 14.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի չվճարված գումար:

Նշված փաստը հաստատվում է դատարանի վճռով, Դիմողի դիմումով և բացատրությամբ, վկա Նիկոլայ Հակոբյանի ցուցմունքով:

5. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԿԴ3/0275/02/16 քաղ. գործով 06.07.2016թ.-ի վճիռը չի բողոքարկվել և 09.08.2016թ-ին մտել է օրինական ուժի մեջ:

Սույն փաստը հաստատվում է թիվ ԿԴ3/0275/02/16 քաղաքացիական գործով www.datalex.am դատական տեղեկատվական համակարգից տպված քաղվածքով, Դիմողի բացատրությամբ, վկա Նիկոլայ Հակոբյանի ցուցմունքով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Վահագն Դանիելյանը փաստաբան է հանդիսանում 15.04.2002թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ առկա է 4 ավարտված կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը: Պալատի խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/51-Ա և 06.10.2016թ. թիվ ԿԳ/115-Ա որոշումներով փաստաբան Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար: Վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ համապատասխանաբար նկատողություն և խիստ նկատողություն, որոնք մարված են:

Պալատի խորհրդի 15.12.2016թ. թիվ ԿԳ/194-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար փաստաբան Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ «Դեոնթոլոգիա» թեմայով լրացուցիչ վերապատրաստման դասընթացի մասնակցություն՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով: Տույժերը չեն մարվել:

Փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ հարուցված մեկ կարգապահական վարույթ կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Վահագն Դանիելյանը ենթակա է պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտում թույլ տալու համար, իսկ Կանոնագրքի 3.1.8, ենթակետի հատկանիշներով փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) **39-րդ** հոդվածի առաջին մասի համաձայն՝ ***փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:***

7.1 Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1.ենթակետերի խախտման մասով.

Կանոնագրքի **2.7.2** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության իրականացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործով Խորհուրդը հաստատված է համարում, որ փաստաբան Վահագն Դանիելյանը՝ որպես Դիմողի ներկայացուցիչ, 23.03.2016թ-ին ընդդեմ Աստղիկ, Հունան, Դավիթ, Ռուզաննա Պետրոսյանների, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և գումարի բռնագանձման պահանջների մասին հայցադիմում է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որը դատարանի կողմից 06.07.2016թ. վճռով մերժվել է՝ նշելով, որ ժառանգություն ընդունելը ժառանգների իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, հետևաբար հայցապահանջը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184, 1225-1226 հոդվածների պահանջներից:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից դատարան ներկայացված հայցապահանջը սխալ է ընտրված, որի արդյունքը եղել է ի վնաս իր վստահորդի՝ Դիմողի կայացված դատական ակտը:

Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ դատարանի կողմից Դիմողի անունից կազմված հայցը մերժելուց հետո Պատասխանողը բաց է թողել վճիռը բողոքարկելու ժամկետը: Սույն պարագայում Պատասխանողը որևէ կերպ չի հիմնավորել դատարանի վճիռը չբողոքարկելու իր վարքագիծը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատասխանողը Դիմողին հայտնել է, որ իր կողմից դատական ակտը բողոքարկվելու է վերաքննության կարգով, Խորհուրդը գտնում է, որ բոլոր դեպքերում, փաստաբանի մասնագիտական ձեռնհասությունն ու արհեստավարժությունը, ինչպես նաև բարեխղճությունը պահանջում էին վերաքննիչ բողոքի ներկայացում:

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից ցուցաբերվող մասնագիտական և անձնական բարեխղճությունն իր վստահորդի և նրա գործի նկատմամբ չի կարող լինել բավարար՝ առանց իր վստահորդի հետ մշտական կամ պարբերական կապի, տեղեկատվության փոխանակման, գործի ընթացքի վերաբերյալ փաստաբանի կողմից վստահորդին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման, գործի հնարավոր արդյունքի և վստահորդի քայլերի վերաբերյալ պատշաճ ջանասիրությամբ տրված խորհրդատվության:

Կանոնագրքի **3.5.5** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:***

Կանոնագրքի **3.6.1** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանողը Դիմողին չի տրամադրել պատշաճ խորհրդատվություն, գործի ընթացքի մասին կանոնավորապես և ժամանակին չի տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, որի արդյունքն է վստահորդի՝ տարիներ շարունակ անտեղյակությունը գործի ընթացքից և մանրամասներից, փաստաբանի գործողություններից: Ավելին՝ այն դեպքերում, երբ հանդիպել և (կամ) զրուցել է Դիմողի կամ նրա ամուսնու հետ, նրանց հաղորդել է կցկտուր և իրարամերժ տեղեկություններ ինչպես գործի ընթացքի, այնպես էլ հետագա գործողությունների վերաբերյալ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է վերաքննիչ դատարանի կողմից, իբրև թե, Պատասխանողի բողոքի բավարարմանն այն դեպքում, երբ վերաքննիչ դատարան բողոք չի ներկայացվել և առաջին ատյանի դատարանում գործի քննության սկզբին, գործի քննության ժամկետներին և դատավարական այլ ժամկետների:

Խորհուրդը գտնում է, որ նման վարքագիծը հակասում է փաստաբանի բարեխղճության, ջանասիրության և արհեստավարժության՝ Կանոնագրքով և միջազգային փաստաթղթերով նախատեսված կանոններին և չափանիշներին:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նման վարքագիծը վկայում է այն մասին, որ նա պատշաճ բարեխղճություն և ջանասիրություն չի ցուցաբերել իր վստահորդի և նրա գործի նկատմամբ, չի դրսևորել մասնագիտական բավարար ձեռնհասություն՝ կապված իրավունքի համապատասխան ոլորտի՝ տվյալ դեպքում պարտավորական-պայմանագրային և ժառանգական իրավունքի, չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ, գործի ընթացքի մասին կանոնավորապես և ժամանակին չի տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից թույլ է տրվել Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջները:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պալատի Խորհուրդը հաշվի առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառել խիստ նկատողություն կարգապահական տույժի տեսակը, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

7.3 Կանոնագրքի 3.1.8 ենթակետի մասով.

Կանոնագրքի **3.1.8** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ***

այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհիմնավորվի Պատասխանողի կողմից այս ենթակետի խախտման փաստը:

Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ փաստաբանի: Հետևաբար, Կանոնագրքի 3.1.8. ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի, Պալատի կանոնադրության 16.26 կետի Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր՝ թիվ 425) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 425) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 6 ամսվա ընթացքում 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Կարգապահական վարույթը Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման մասով կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Մելանյա Առուստամյան**

20 փետրվարի 2018թ.
թիվ ԿԳ/20-Ա
ք. Երևան